ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Աշոտի Անտոնյանի «Տեղեկատվական եվ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Լիլիթ Անտոնյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից կրթության առավել արդիական և հրատապ հիմնախնդիրներից մեկին՝ հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) և թվային գործիքների արդյունավետ ներդրմանն ու կիրառմանը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթության համակարգի թվայնացման համաշխարհային միտումներով, կրթության կառավարման նոր պահանջներով, ինչպես նաև ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներով, որոնք ենթադրում են տվյալահենք կառավարում, թվային միջավայրի ձևավորում և «թվային առաջնորդության» հաստատում:

Ատենախոսության ներածությունում հստակ ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, վարկածը, մեթոդաբանական հիմքերը, կիրառված մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության կարևոր արժանիքներից է այն, որ հեղինակը հիմնախնդիրը դիտարկել է ոչ միայն տեխնոլոգիական, այլև մանկավարժական և կառավարչական համատեքստում՝ առաջադրելով «ՏՀՏ-ների մանկավարժականացում» գաղափարը: Հեղինակը համոզված նշում է, որ կրթական միջավայրում տեխնոլոգիան ինքնանպատակ չէ, այլ պետք է ծառայի մանկավարժական նպատակների իրականացմանը, ուսուցման և կառավարման արդյունավետության բարձրացմանը, համագործակցային մշակույթի ձևավորմանը և կրթության որակի բարելավմանը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հետազոտությունն ունի հստակ գործնական ուղղվածություն: Հեղինակի կողմից մշակված ներդպրոցական կառավարման օպտիմալ մոդելը, դրա իրականացման մանկավարժական պայմանները, ինչպես նաև դպրոցի տնօրենին կից ՏՀՏ-ների մանկավարժականացման և թվայնացման գործընթացները համակարգող խորհրդի գաղափարը կարող են արդյունավետ կիրառություն գտնել ժամանակակից հանրակրթական հաստատություններում:

Գործնական արժեք ունեն նաև ծնողական կրթության թեմատիկայի, համացանցային կախվածության կանխարգելման և թվային հաղորդակցության կազմակերպման վերաբերյալ առաջարկությունները:

Հետազոտության գիտական նորույթը դրսևորվում է հատկապես հետևյալ դրույթներում՝

- դպրոցի կառավարման գործընթացում ՏՀՏ-ների ներդրման անհրաժեշտության բացահայտում,
- «մանկավարժական պայման» հասկացության բովանդակային և գործառնական բնութագրերի հստակեցում,
- թվային գործիքների կիրառմամբ ներդպրոցական կառավարման օպտիմալ մոդելի մշակում,
- դպրոցի կառավարման թվայնացման գործընթացների համակարգման մեխանիզմների առաջարկում:

Հետազոտության տեսական հիմքերը ընդգրկում են հանրակրթական դպրոցի կառավարման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման վերաբերյալ ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային հեղինակավոր գիտնականների աշխատությունները, հումանիստական մանկավարժության, ռեֆլեքսիվ կառավարման, նորարարական գործընթացների կառավարման վերաբերյալ տեսությունները: Դրական է նաև այն, որ հեղինակը ուսումնասիրել և համեմատական վերլուծության է ենթարկել միջազգային առաջատար փորձը (Էստոնիա, Ֆինլանդիա, Սինգապուր և այլն), չորոշակիացնելով թե դրանցից որն է հնարավոր ներդնել մեր հանրապետությունում:

Այս տեսանկյունից առաջին գլխի առաջին ենթագլուխն ունի ներածական-նկարագրական բնույթ, որտեղ վերլուծական և համադրական բաղադրիչները բավարար չափով զարգացված չեն:

2-րդ ենթագլխում հիմնականում ներկայացնում է ընդհանուր տեսական դրույթներ կրթության կառավարման գործընթացում թվային գործիքների և ՏՀՏ-ների կիրառման վերաբերյալ: Ատենախոսը հիմք ունենալով մի շարք տեսական դրույթներ՝ հիմնավորել է դրանց ներդրման անհրաժեշտությունը կրթական բարեփոխումների արդի փուլում:

3-րդ ենթագլխում դարձյալ անդրադարձ է կատարվել կրթության կառավարման ոլորտի թվայնացման արդի միտումներին և ՏՀՏ-ների կիրառման ռազմավարությանը կրթության կառավարման ոլորտում:

4-րդ ենթագլխում դիտարկվել է «մանկավարժական պայման» հասկացությունը և դրա դերը կառավարման գործընթացում:

Երկրորդ գլուխը կրում է «Թվային գործիքների կիրառմամբ հանրակրթական դպրոցի կառավարման ուղիներն ու մեխանիզմներն արդի փուլում» խորագիրը:

Երկրորդ գլխի 1-ին ենթագլխում ներկայացված և բնութագրված են թվային գործիքների կիրառմամբ մշտադիտարկման հիմնական ոլորտները հանրակրթական դպրոցում:

2-րդ ենթագլխում ներկայացված և հիմնավորված են թվային գործիքների և ՏՀՏ-ների կիրառումը դպրոցի գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման գործընթացում:

Որոշակի գիտահետազոտական արժեք է ներկայացնում 3–րդ ենթագլուխը, որում ներկայացված են ատենախոսի կողմից իրականացված հետազոտության՝ ՏՀՏ-ների կիրառմամբ կառավարման գործունեության ձևերի արդյունավետության համեմատական վերլուծությունը:

4-րդ ենթագլխում՝ «Թվային դպրոցի ներդրման հեռանկարները ՀՀ հանրակրթական դպրոցում» քննության են առնվում «թվային դպրոցի» ներդրման նախադրյալները, հնարավորությունները և հեռանկարները ՀՀ հանրակրթական

դպրոցում: Բացահայտված են թվային դպրոցի առանձնահատկությունները կրթական նոր հարացույցի ձևավորման գործընթացում, երբ աստիճանաբար տեղի է ունենում անցում «կոշտ» մանկավարժությունից դեպի «ճկուն» մանկավարժություն:

Իրականում ատենախոսի կողմից փորձ է արվել դիտարկել կրթության կառավարման մի քանի մոդելներ, որոնց ներդնումը ՀՀ կրթական համակարգ էականորեն կբարելավի այդ ոլորտի կառավարման արդյունավետությունը:

Այս ենթագլխում բնութագրված են կրթության կառավարման թվային տեխնոլոգիաները և դրանց ներդրման հնարավորությունները ՀՀ–ում:

Առանձնակի գիտական նորույթ ենք համարում ատենախոսի մշակած դպրոցի տնօրենին կից «ՏՀՏ-ների մանկավարժականացման խորհրդի» կանոնադրությունը, աշխատանքայի պլանը և ծնողական համալսարանի թեմատիկան, որոնք ակնառու գիտագործնական, կառավարչական նշանակություն ունեն և մեթոդաբանական արժեքավոր օգնություն կլինեն այսօրվա դպրոցի կառավարման սուբյեկտներին:

Ատենախոսի գիտատեսական ընդհանրացումների և կառավարման ոլորտում ձեռք բերված գործնական փորձի, նորարարական կարողությունների դրսևորման արդյունք է նաև մշակված ներդպրոցական կառավարման օպտիմալ մոդելը:

Ճիշտ է գծապատկերային տարբերակում որոշակի չեն արտահայտված դրանց բաղադրիչների բովանդակային կողմերը, սակայն ատենախոսության բովանդակության մեջ ներկայացված են դրանց էական բնութագրերը:

5-րդ ենթագլխում ներկայացված և բնութագրված են ներդպրոցական կառավարման օպտիմալ մոդելի իրականացման մանկավարժական պայմանները:

Այսպիսով կարելի է պնդել, որ Լիլիթ Անտոնյանի «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» ատենախոսությունը ինքնուրույն, գիտագործնական կարոր նշանակություն ունեցող հետազոտություն է:

Ատենախոսությունը անթերի տեսնելու անկեղծ ցանկությամբ կցանկանայինք ատենախոսի ուշադրությունը հրավիրել հետևյալ թերությունների վրա.

1. Ատենախոսությունից անհիմն բացակայում են հետազոտության օբյեկտը և առարկան:

2. Լիարժեք չեն ներկայացված կրթության համակարգի, մասնավորապես դպրոցի կառավարման տեսական-մեթոդաբանական հիմքերը, որտեղ նշված ոչ մի հեղինակի տեսական մոտեցմանը անդրադարձ չկա, միայն ատենախոսության մի ենթագլխում բերված է Ա.Ստեփանյանի թեկնածուական ատենախոսությունից մի փոքրիկ հղում:

3. Պարզ չէ, թե ատենախոսը որտեղից է վերցրել 124-125 էջերում ներկայացված կառավարման տեխնոլոգիաները, օրինակ, «կառավարում բացառիկ դեպքերում» և այլն, մինչդեռ կառավարման ժամանակակից տեխնոլոգիաները չեն ներկայացված, բացի ՏՀՏ–ներից: Չնայած, որ այսօր գիտական գրականությունում շրջանառվում են ռազմավարական, տվյալահեն, մոնիթորինգի և ներքին գնահատման, համագործակցային, նախագծային, կարողունակահեն, հաղորդակցական, ներառական, ցանցային, ռեֆլեքսիվ կառավարման և այլ տեխնոլոգիաներ:

4. Լիարժեք չեն բնութագրված ներդպրոցական կառավարման սկզբունքները և գործառույթները, ատենախոսությունում դիտարկված են ընդամենը 4 գործառույթ:

5. Ատենախոսությունում կիրառվում է «դպրոցի կառավարման հումանիստական մոդել» հասկացությունը, որը, սակայն, բավարար տեսական հիմնավորում չունի: Հեղինակը հղում է կատարում Թ. Բուշի, Ք. Բ. Էվերարդի, Ջ. Մորիսի և Ի. Ուիլսոնի աշխատություններին, սակայն նշված հեղինակների մոտ «հումանիստական մոդել» որպես կրթական կառավարման ինքնուրույն և գիտականորեն հաստատված մոդել չի առանձնացվում: Ավելի շուտ խոսքը վերաբերում է մարդկակենտրոն մոտեցմանը կամ կոլեգիալ կառավարման մոդելին: Հետևաբար, «հումանիստական մոդել» եզրի կիրառումը տվյալ

համատեքստում տեսականորեն լիարժեք հիմնավորված չէ և ստեղծվում է տպավորություն, թե հեղինակի կողմից ձևավորվել է պայմանական կամ ոչ բավարար գիտականորեն հստակեցված հասկացություն:

6. Ատենախոսությունում առկա է տերմինաբանական անորոշություն («ՏՀՏ ների մանկավարժականացում», «թվային գրագիտության մանկավարժականացում»). «ՏՀՏ-ների մանկավարժականացում» հասկացությունը լիարժեք սահմանված չէ, իսկ «Թվային գրագիտության մանկավարժականացում»-ը կրկնակի ածանցավոր, մեթոդաբանորեն թույլ կառուցված հասկացություն է, քանի որ թվային գրագիտությունն ինքնին արդեն կրթական արդյունք է, ոչ թե «մանկավարժականացվող երևույթ», կամ ուսուցիչը ներկայացվում է որպես կառավարման օղակ, մինչդեռ ուսուցիչը կառավարման սուբյեկտ է:

7. Ատենախոսության լեզվաբանական և տերմինաբանական համակարգը բնորոշվում է նորարարական և լայն կիրառվող հասկացությունների ինտենսիվ օգտագործմամբ, սակայն դրանց զգալի մասը բավարար չափով չի տեղավորվում միջազգային կրթագիտական տերմինաբանության խիստ շրջանակներում, ինչի հետևանքով որոշ դեպքերում թուլանում է գիտական խստությունը և հստակությունը:

8. Ատենախոսությունում առկա են բազմաթիվ կրկնություններ, սխալ թարգմանված, ոչ հստակ ձևակերպումներ, շարահյուսական, կետադրական սխալներ, հղումներ, որոնց հեղինակները նշված չեն(էջ 33, 47, 51,73,74 և այլն):

Իհարկե, արված դիտողությունները չեն իջեցնում ատենախոսության գիտագործնական արժեքը: Այն ավարտուն, ինքնուրույն հետազոտական աշխատանք է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Աշոտի Անտոնյանի «Տեղեկատվական եվ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լ.Թ. Ասատրյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լ.Թ. Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հ. Թադևոսյան

18. 05. 2026թ.